ի հետ Միհալին։ Եւ յաղթահարեաց Միհալ զզօրքն Իլախի, և նոքա ընկան փախստական. և նա կոտորելով եհաս ի Խոդին, ի հետ դնելով. և նոքա ընկան ի գետն որ կոչի Տուրլու, և բազումք ի նոցանէ ընկղմեցան. մինչեւ հաղիւ փախեաւ զօրագլուխ նոցա Կուլաքիյ, և ինքն Միհալ դարձաւ և գնաց ի Սեչոմն, և նստաւ ի պարոնութիւն։ Եւ Երեմիա Օլախի պարոն գնաց առ քանցլէրն, որ էր զօրավար երկրիս այս, և աղաչեաց զինքն՝ զի երթիցէ զօրօք իւրովք ի վերայ այդ Միհալին, և հալածեսցէ զինքն յերկրէն։ Եւ յորժամ եմուտ զօրօք իւրովք քանցլէր յերկիրն Օլախաց, իբրեւ լուաւ Միհալ զգալուստ քանցլէրին, վաղվաղակի եթող զերկիրն և փախեաւ. և քանցլէրն չոգաւ զկնի նորա. և նա ելաւ ի վերայ բլրոյ միոյ բարձու՝ զոր անհնար էր ելանել ի վերայ նորա, և անդէն փախ էառ ի Մահարք։ Եւ քանցլէրն դարձաւ ի Մինդանի երկիր, և էառ ընդ ձեռամբ իւրով, և նստոյց զՍիմէոն եղբայրն Երեմիայի փոխանակ Միհալի. նոյնպէս և զԵրեմիա նստոյց իւր պարոնութիւն ի Սեչոմն. և ինքն քանցլէր դարձաւ և եկն ի Կամենից, և գնաց առ թագաւորն։ Եւ Միհալն կորեաւ անհետ, և կորոյս զամենայն զօրս իւր ընդ ինքեան՝ ունայնութեամբ։

1602. Թվ. ՌԾԱ. Փետրվարի ԻԵ, օրն հինգշաբթի։ Մեծ զարմանք եղաւ. զի երկինք որոտաց, զոր բնաւ ոչ էաք տեսեալ և ոչ լուեալ. Աստուած զաւարտն ի բարին առնէ և բառնայ զցասումն և զպատուհասն իւրական արարածոց, նա և ի մէնջ մեղաւորացս. ամէն։

1602. Թվ. ՌԾԱ. Աւգոստոս ամսոյ ԺԶ, օրն երկուշաբթի։ Փառք Աստուծոյ Հօր անմահի և Որդոյն Միածնի և Ս. Հոգոյն Աստուծոյ ճշմարտի. այժմ և յաւէտ յաւիտեանս. ամէն։ Եւ արդ պարտ և արժան է մեզ զայսպիսի ամենայն ինչ գրով աւանդել, զի առ յապա եկեալքն ընթեռնլով փառս տացեն Աստուծոյ։ Ո՛հ, ո՛հ, ո՛հ. եթէ որպէս հրամանն Աստուծոյ եկն ի վերայ մեր, վասն ծովացեալ մեղաց մերոց. այս ինքն է զոր եղեւ այսմ ամի Կամենից ողորմելի քաղաքիս մեծ և անողորմ ցասումն պատուհասի հրոյ, որ բովանդակ և ամենայն քաղաքն հրկիզ այրեցաւ ի փոքր և ի սուղ ժամանակի. ամենայն ինչ մարդկային ազգի այրեցաւ, եթէ տներ, եթէ խանութներ. ոչ թէ միայն փայտեղէն չէնք՝ այլ և քարուկիր շինուածք, եթէ խանութներ, եթէ տներ մեծագոյնք և եթէ աքլեբներ (կրպակ, խանութ), ամենայն բարութեամբ, որչափ ինչ ոք ունէր՝ բովանդակ այրեցաւ։ Եւ քանզի մեծ և ահագին էր ցասումն այս, զի բնաւ ոչ կարացին դէմ կալով շինուցանել զհուրն, քանզի իբրեւ կայծակունս հրոյ բորբոքելով այրէր և տոչորէր զքարինս և զփայտս. այլ և մարդիկք փոքր ի շատէ այրեցան. այլ և մարդասիրութիւն Աստուծոյ՝ որ գիշեր չէր բանս այս, այլ երեկոյին ժամուն էր, մինչեւ նսեմացաւ՝ ամենայն քաղաքն փոշի և մոխիր դարձաւ։ Այլ եւս այս մեծ պատուհաս էր, զի եկեղեցիք Հայոց այրեցան, և զանկակներ հալեցան ի մէջ պուրճերուն. մեծ և ողորմելի կսկիծ եղաւ վասն հրաշալի և